ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

20/05/2026թ. ԿՆՔՎԱԾ N ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-26/21 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Գավառ «08» հուլիսի 2026թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի, որը գործում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հիման վրա (այսուհետեւ՝ Պատվիրատու), և «ՄՈՎՍ ՇԻՆ» ՍՊԸ և «Քյավառ Սերվիս» ՍՊԸ կոնսորցիումի, որի անունից հանդես է գալիս գործընկեր 1-ը՝ «ՄՈՎՍ ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մովսես Մովսիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ (այսուհետեւ՝ Կապալառու), մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով «ՄՈՎՍ ՇԻՆ» ՍՊ Ընկերության կողմից ստացված 01/07/2026 թվականի N Գ-001-07/26 գրությունը, և ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-26/21 ծածկագրով պայմանագրի 8. 5 կետի պահանջները՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-26/21 ծածկագրով պայմանագրի հավելված 2-ում նշված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 /մեկ/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագիրը համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

2.4 Սույն համաձայնագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գավառի համայնքապետարան
1201, ք.Գավառ, Գր. Լուսավորչի 12
ՀՀ ՖՆգործառնական վարչություն
Հ/Հ 900172150030
ՀՎՀՀ 08425757

Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ _____
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄՈՎՍ ՇԻՆ» ՍՊԸ
ք.Գավառ, Սայադյան փողոց N 112
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2500011559110100
ՀՎՀՀ 08429148

Մ.ՄՈՎՍԻՍՅԱՆ _____
/ստորագրություն/
Կ.Տ.